# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ»

Ա. Ա. ԻՆՃԻԿՅԱՆ

Իր ստեղծման պատմությամբ միանգամայն հազվագյուտ գիրք է «Հիշատակարանը»։ Իսահակյանը այդպիսի գիրք և՛ գրել է, և՛ չի գրել։ Եթե Վարպետը ապրեր էլի մի տասնամյակ և ցանկություն ունենար լույս աշխարհ բերել այս գիրքը, հաղիվ թե նրան այդ հաջողվեր։ Բանն այն է, որ Իսահակյանը իսկական օրագիր պահել է 5 տարի՝ 16—20 տարեկանում։ Եվ թեպետ լրացրել է այն պարբերաբար ու խնամքով, բայց մեծ դժվարությամբ, ինքն իրեն ստիպելով. «Ահա քանիերորդ անգամն է, որ ես ձեռնարկում եմ հիշատակարան գրել։ Բայց զանազան հակասող մտքեր, հանգամանքներ, կամքի թուլություն, բնավորության թուլություն, տոկի ու եռանդի բացակայություն, հարատևության սնանկություն. ահա սրանք ուժեղ արգելառիթներ են հանդիսացել իմ ձեռնարկմանը»[1]։

Հետագայում Իսահակյանը ունեցել է ծոցատետրեր, որոնց մեջ կենցաղային ու զանազան այլ գրառումների հետ կան այնպիսիները, որոնք, ասես, լինեն բուն «Հիշատակարանի» շարունակությունը։ Բացի այդ, նա մինչև կյանքի վերջը իր խոհերն ու մտորումները գրի է առել բանաստեղծությունների, պոեմների, «Ուստա Կարոյի» նախապատրաստական նյութերի տետրերում, ծոցատետրերում, նույնիսկ գրադարանային պահանջաթերթիկների կամ պատահած թղթի կտորի վրա։ Եվ այսպես՝ 65 տարվա գրառումները հարկավոր էր բծախնդրորեն ընտրել, մեկտեղել, մի շարք գրությունների տարեթվերը, ամիսն ու օրը որոշել տետրի, թղթի, թանաքի, նույնիսկ բանաստեղծի գրության տրամադրության միջոցով։ Այս ամենը անհրաժեշտ էր կատարել աչքի առաջ ունենալով բանաստեղծի ամբողջ արխիվը, քաջատեղյակ լինելով նրա կյանքի բոլոր անցուդարձերին, իմանալ Վարպետի ձեռագրի կրած փոփոխությունները, տետրերի և թերթիկների ճակատագիրը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ կապված է Իսահակյանի անվան ու գործի հետ։ Այս ամենին ավելացրած աշխատասիրությունն ու համբերությունը, որ պիտի ունենար նման գործ ձեռնարկողը։ Ինքը՝ Իսահակյանը, ի վիճակի չէր այդպիսի գործ կատարելու։ Նա մտադիր էլ չի եղել անձամբ ստեղծելու «Հիշատակարանի» համահավաք տեքստ, որովհետև Իսահակյանը բոլորից լավ է իմացել, որ ինքը վատ իսահակյանագետ է։ «Իմ ետի հետ (Բարեկամիս հիշատակարանը)» դեռևս անտիպ գործում Իսահակյանը կարծես խոստովանել է. «...Ապրած օրերս, դեպքերը, իրերը հիշողությանս մեջ սուզվում են իրար վրա, իրար մեջ, և խառնափնթոր, առանց տարիների կարգի, սեռի ու տեսակի, միայն հնազանդ մի անգիտակից ուժի, ելնում են հոգուս մակերևույթի վրա, մի վայրկյան, նո-

---

1 Քաղվածքները վերցված են Արամ Ինճիկյանի կողմից տպագրության պատրաստած՝ Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանի» ձեռագիր օրինակից։

րից սուղվելու հոգուս ծովի մեջ։ Եվ ո՞րն է նոր կամ հին հիշողությունը—չկա այդպիսին։

Այո, ես օրագիր չեմ պահել պատանիների կամ օրիորդների նման. օրը-օրին գրելով ապրումներս, երբեք. գրել եմ հատ ու կտոր թղթերի վրա, ինչ որ գրգռել է ուղեղս... սիստեմ չեմ սիրել, և բնության պես հոգիս խառն է ու խճճված»։

Վարպետը, ինչպես իր մյուս անտիպ գործերի, այնպես էլ «Հիշատակարանի» մեկ ամբողջական գրքով հրատարակելու իրականացումը հանձնարարել էր Արամ Ինճիկյանին, խորապես համոզված լինելով, որ այդպիսի մի գործ կարող է գլուխ բերել անսահման նվիրված ու քաջահմուտ իր բարեկամը։ Ինճիկյանը փաստորեն ստեղծել է մի գիրք, որը բնագրի հետ սոսկ համեմատելու համար հարկավոր կլինի մեկ առ մեկ թերթել Վարպետի ամբողջ արխիվը։ Այդ աշխատանքի հետ փոքր-ինչ շփումը ցույց է տալիս, թե բանասիրական ինչ հսկայական աշխատանք է թափել գրականագետը Հիշատակարանը «Հիշատակարան» դարձնելու համար։ Բայց ո՞չ բանասիրական և ո՞չ էլ տեքստաբանական թեկուզ մեծ հմտություններով, հնարավոր չէր կատարել այս աշխատանքը, եթե բանաստեղծն ու գրականագետը չլինեին բարեկամներ։ Վարպետը Ինճիկյանին գործնական մեծ օգնություն է ցույց տվել ձեռագրերի հետ կապված բազմաթիվ հարցերում։ «Հիշատակարանի» պատրաստումը այն հետաքրքիր երևույթներից է, երբ գրականագետի, բանասերի և տեքստաբանի աշխատանքը վերաճում, դառնում է ավելին, քան ենթադրվում է, երբ կազմողը ոչ թե հեղինակի ստեղծագործությունը պատրաստում է հրատարակության՝ անելով մասնակի ճշգրտումներ, լրացումներ, կրճատումներ, այլ զանազան մտքերը, գրությունները, ամբողջական հատվածները դարձնում է ստեղծագործություն, գիրք։

Ի տարբերություն մի շարք մեծ գրողների և արվեստագետների օրագրերի, Իսահակյանի «Հիշատակարանում» հազվադեպ են առօրյա միջադեպերի արձագանքները։ Իսահակյանը ներհայեցող մարդ էր ու գրող և կյանքի դժվար պահերին հաճախ է կիսվել ինքն իր հետ։ «Հիշատակարանը» ուրույն մենախոսություն է, մտքի, զգացմունքի, տրամադրությունների վերելքներով ու վայրէջքներով։ Այն 15-ամյա պատանուց մինչև ութսունն անց ծերունի բանաստեղծի օրագրություն-խոստովանություն է, խոստովանություն ոչ թե մի երկրորդ անձի, այլ ինքն իր առաջ։

Կարդալով «Հիշատակարանը», այն տպավորությունն ենք ստանում, թե Վարպետի հուժկու միտքն ու զգացմունքը չեն տեղավորվել քնարական նուրբ ձևերի, նույնիսկ պոեմների, նույնիսկ «Աբու-Լալա-Մահարու» մեջ։ Դեռևս աշակերտական նստարանից՝ Իսահակյանը ունեցել է մտքի այնպիսի ժայթքումներ, որոնք արտահայտել չափածոյի միջոցով հնարավոր չէր։ Այդ ինքն էլ գիտեր, որ երբեմն իր հախուռն մտքերը հանձնում էր ծոցատետրերին, իսկ երբեմն էլ փորձում էր գրել «Ուստա Կարո» լայնապլան վեպը։ Եվ Վարպետը շատերին գրում, խոստանում էր, որ արդեն սկսել է, մի քանի գլուխ գրել է, ավարտելու վրա է և, նույնիսկ, արդեն ավարտել է «Ուստա Կարոն», որն այդպես էլ մնաց անավարտ։ Նա ինքն էլ չէր զգում, որ «Ուստային» զուգահեռ, նույնիսկ այդ վեպի տետրերում, ստեղծվում էր իր լավագույն գործերից մեկը՝ «Հիշատակարանը»։

Իսահակյանի գրեթե ողջ արձակի պես «Հիշատակարանը» գրված է բանաստեղծի գրչով։ Կարելի է ամբողջ հատվածներ արտասանել որպես արձակ բանաստեղծություն, որ տարիքում էլ այն գրված լինի։ Ահա 18-ամյա բանաստեղծի գրառումներից մի հատված. «Իմ սիրտս նման է ծովի... Երբ նա վիշտ ունի, տխուր է, ու մելամաղձիկ, այն ժամանակ ամպերն ու մշուշը իջնում են ծովի—սրտիս վրա, ու ես խավար եմ, գլուխս քաշ արած—լուռ ու բաժանված արտաքին աշխարհից—մտածում եմ—երկա՜ր ու երկա՜ր. Այդ ժամանակ չեմ կարող գոռալ, շաչել, փրփուր տալ... Ես միայն կարող եմ նստել անշարժ ու մտածել, թաղվել... Բայց հենց որ մշուշը—ամպերը վերանում են, սկսում է սիրտս—ծովը բացվել, այդ ժամանակ ես կարող եմ ծփալ ու ալիքներ տալ, ես կարող եմ երգել ու գրել—ոտանավորներ գրել... Մի քիչ հետո—գրելուց հետո—ամբողջ սիրտս բացվում է, արևը բարձրանում է երկնքում, ու ընկնում իմ սրտիս—ծովի վրա, շողում է ծովն—սիրտս ու ուրախ ծփում, ձկները լողում են ու թռչունները ծափ տալիս—այդ ժամանակ ես կարող եմ ուրախ պարել, երգել ուրախ, խաղալ, լողանալ գետում ու ձի քշել... Մեկ էլ ծովը մրրկում է, փչում են քամիներ, կայծակ, որոտ և կոհակներ ու փրփուրներ—այս ժամանակ ձկները ու թռչունները փախնում են, նավերը տատանվում, ժայռերը փշրվում... Իմ սիրտս էլ է ալեկոծվում, ես բարկանում եմ, կատաղում եմ, դայրանում եմ, գոռում եմ ու գոչում... Էլ չեմ կարող երգել, պարել կամ խաղալ... Անցնում է այդ մրրիկը—հանդարտվում է ծովը—և գալիս է գիշերը—հով, աստղոտ գիշեր, բուրմունք ու հովեր... ծովը ծփում է մեղմիկ, աստղերն ու լուսինը ընկել են ծովում... Լուռ ու հավիտենականություն կա շորսդիդ—իմ սիրտն էլ ունի իր կախարդիչ գիշերը—ես երազում եմ, մեղմ լալիս ու երգում, ցնորում... Դա իմ սրտի պոեզիան է...

... Ես ոգևորված եմ—խփում եմ կյանքի ժայռերին... Ներդաշնակ գոչում եմ... և տարածվում ափերից դուրս... Այս ժամանակ ես չեմ կարող մտածել. Երգել կամ գրել... Ես կուզեմ թրթռալ, վառվել ու այրվել, գոչել, քարողել, կռվել ու մեռնել՝ լի իդեալներով...»։

Բաղմաբովանդակ է Իսահակյանի «Հիշատակարանը». մարդկություն, տիեզերք, մահ, հայրենիք, ազգ, բարոյախոսություն, ճակատագիր, սեր... «Ի՞նչ է նիրվանը.— հարցնում է բանաստեղծը,— ի՞նչ է բնազդումը, ի՞նչ է ես, ցանկանալը, միտքը, հոգին...»։ Հարցնում է, ու այս ամենի շուրջ ինքնատիպ դատողություններ անում դեռևս ուսանող Իսահակյանը։

«Հիշատակարանը» անգնահատելի է որպես բանաստեղծի ստեղծագործական մտահղացումների մեկնաբանություն։ «Հիշատակարանը» այն ընդերքն է, որից սկիզբ են առել Իսահակյանի բանաստեղծություններն ու պոեմները, լեգենդներն ու բալլադները, պատմվածքներն ու վրույցները։ Իսահակյանական ինչքան տողեր են ծնունդ առել այս մտորումից. «Վա՜յ, վա՜յ, վա՜յ... Անտանելի՜ աշխարհ... դարտա՜կ, դարտա՜կ. անցավ պատանեկան վառ հավատը, ոգևորությունը... եկավ ցո՜ւրտ, ձգձգո՜ւն կյանքը... Սիրելիները մեռնում են, ընկերներից խաբվում ես. զգացմունքները սառչում են, և դատարկվում է կյանքը...

Հիվանդություն, մահ, երկյուղ, սարսափ, սով, քաղց... Մարդիկ—անտարբեր, անզգա, եսական...»։

Էջ առ էջ «Հիշատակարանը» բացում է բանաստեղծի հոգու անտեսանելի, անպատմելի, անվերծանելի գաղտնարանները, որտեղ հյուսվել է գրողի բարդ

ու այնքան հակասական աշխարհայացքը։ Հայտնի է, թե ինչպիսի խոր հետաքրքրություն է ցուցաբերել Իսահակյանը հնդկական ու չինական փիլիսոփաների, գերմանական դասական փիլիսոփայության, Շոպենհաուերի, Նիցշեի, աշխարհի ժողովուրդների պատմությունների ու զրույցների նկատմամբ։ Չի կարելի ասել, որ նա ուսումնառության ընթացքում՝ գիտելիքների ձեռքբերման ճանապարհին ընկել է այս կամ այն մտածողի հայացքների ազդեցության տակ։ Իսահակյանը դեռ պատանի հասակից հակված է եղել խորհելու, փիլիսոփայելու։ Նա ի ծնե օժտված է եղել փիլիսոփայական բնատուր մեծ ձիրքով։ Ու նրա սերն ու հետաքրքրությունը դեպի փիլիսոփայությունը եղել է բնականոն։ Ահա թե ինչ է խորհրդածում 16-ամյա Իսահակյանը. «...Ես ըմբռնում եմ. որ տիեզերքի մեջ ամեն բան սխալ կազմակերպություն ունի. մենք չգիտենք ապրել, մենք չունենք բարոյականություն. մենք մեզ չենք ճանաչում. մենք միայն գիտենք լավ խոսել, իսկ զգալ, մտածել, գործադրել—ո՛չ երբեք... Գիտենք բյուրավոր առաքինության իմաստներ, օրինակներ, և դարձյալ շարունակում ենք այնպես փայլել, որպես չենք ուզում։ Ինձ թվում է (այսինքն՝ ես համոզված եմ), որ ամեն մի բարոյական միտք, իմաստ, ամեն մի գաղափար երկսայրի բնավորություն ունի, և՛ լավ, և՛ վատ, նայելով մարդկանց բարեհայեցողության, և հետևապես, ինձ թվում է, որ ընդհանրական, համակարծիք, համամիտ, զուտ ճշմարտություն չկա բնության մեջ։ Ինձ այժմ ամեն բան, ինչ որ կա բնության մեջ, այլ կերպ է երևում, հասկացվում, հակառակ ընդհանրության կարծիքին, դարևոր կարծիքին։ Ես ոչինչի չեմ հավատում, սկսած մեծ փիլիսոփաներից մինչև հետին տիրացուն. ամեն բան քիմքից է կախված. բացատրություններ, հայացքներ, ըմբռնումներ — կամայականություններ են...»։

Պատանի հանճարը իրերն ու երևույթները քննում է սեփական դիտումներով ու կենսափորձով։ Շատ տատանումներով ու հակասություններով հանդերձ, Իսահակյանի բնափիլիսոփայությունը ամբողջովին ինքնատիպ երևույթ է։

«Հիշատակարանը» լուսարձակի նման ուղղված է բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մեջ համար մինչև հիմա անհայտ էջերի վրա։ Իսահակյանը ժամանակին խոստովանել է, որ «Աբու-Լալա-Մահարին» ստեղծելիս ազդվել է Միցկևիչից, Լերմոնտովից և Բարաթաշվիլուց։ Այդ ազդեցությունները երևի եղել են պոեմը ստեղծելու դրդիչներ միայն, որովհետև կարելի է ասել, որ «Աբու-Լալա-Մահարու» դաղափարները Իսահակյանին տանջել են դեռևս պատանի հասակից և այնպես առատորեն սփռված են «Հիշատակարանի» վաղ շրջանի գրառումներում։

Ամբողջ գիրքը շնչում է սիրո զգացմունքով։ Թեև գիրքը չունի սյուժե, բայց բանաստեղծի սիրո դրաման ընթերցվում է դրամատիկական պահերով լեցուն վեպի նման։ Առաջին գրությունից մինչև վերջինը նվիրված է Շուշիկին։ Ահա մի երկու մեջբերում. «Շուշի՜կ, անգի՛ն անուն։ Ա՜խ, լիներ մեկը և կըշոեր իմ զգացմունքները»։ Կամ՝ «Օ, եթե Շուշիկը մեռնի... ես շատ թշվառ կլինեմ, եթե չկարողացա մեռնել հետը, այն ժամանակ դիակի գլխում դրած կերոնի պես կվառվիմ բարձր ըղձերով ու կհալվիմ հավիտենության մեջ»։ Սա գրել է 18-ամյա Իսահակյանը։ Այժմ լսենք 75-ամյա Իսահակյանին. «Երբ մարդ երաղին այնպիսի գեղեցիկ, երջանկացնող բան է տեսնում, օրինակ, մեռած սիրելիների հետ, որ նույնիսկ երաղի մեջ էլ երաղային է, այն քաղցր, եր-

ջանկացնող մոմենտին՝ զարթնում ես, որովհետև քնած, մեռած գիտակցությունը ցնցվում է, զարթնում է, չի հավատում։ Օրինակ. այս գիշեր (առավոտյան դեմ) տեսա, որ ես ջահել տղա, նստել եմ հրաշալի ձին և ուրախ, զվարթ, գնում եմ և հենց էն է՝ պիտի անցնեմ Շուշիկի կեցած տան առջևից, որի պատշգամբում նստել է նա, հանկարծ՝ առջևս քամու ջրաղացի թևի պես մի գերան է կանգնել օդում և քիչ է մնում ճակատիս դիպչի. ուզում եմ գերանը հրել մի կողմ. զարթնում եմ այդ ամենաչքնաղ մոմենտին, երբ պիտի տեսնեմ երազական սիրածիս...

Ի՜նչ հիասթափություն, վիշտ...

Զարթնում եմ՝ ձեռքս լուսամուտի գոգի փայտի վրա...»։

Իսահակյանը Սայաթ-Նովայի պես մեծ սիրահար է, մեծ տառապյալ ու երգիչ։ Բանաստեղծի սիրո պատմությունը հուշում է, որ Իսահակյանի պես մեծ բանաստեղծ լինելու համար պիտի կարողանալ նրա նման սիրել։

«Հիշատակարանը» իմաստախոսությունների շտեմարան է։ Շատերն իրենց հուշերում պատմում են նրա բանավոր խոսքով շաղ տված իմաստությունների մասին։ Մեր պարբերականներում տպագրվել են որոշ ասույթներ ու մտքեր, սակայն այս գրքում սփռված խտացումները վկայում են, թե ինչ վիթխարի աֆորիստիկ միտք է ունեցել դեռևս պտտանի Իսահակյանը։

Չնայած աֆորիզմների առատությանը, այնուամենայնիվ «Հիշատակարանը» դատողական չէ, այլ խիստ զգացմունքային, փոթորկոտ։ Այն հայրենասիրական, ազգային վշտի ու ողբերգությունների նկարագրություններում հիշեցնում է «Վերք Հայաստանի» տարերքը. «Դարեր պիտի գան ու գնան, և խոսքի հանճարները չպիտի կարողանան հայկական սարսափների, տառապանքի, մարտիրոսության անհունը սպառելու...

Ես պիտի նստիմ Մասիսի ստորոտին, գլխիս մոխիր ցանեմ և լամ, լա՜մ՝ նղովելով ամբողջ աշխարհը՝ բարեկամ ու թշնամի, և ամեն հայի սրտում վառելով վրեժի օձ ու թույն։ ...Ա՜խ, ես էլ լինեի քեզ հետ, իմ խե՜ղճ, ջարդվա՜ծ, ճղակտոր, որբ և այրի՜ ժողովուրդ... Աշխարհը՝ քար, մարդիկ՝ օտար, թուրքերը՝ գազան, մանկամորթ, Եվրոպան՝ շահամոլ... իսկ հայերը՝ հավիտենական ղոհեր... Եվ Աստված էլ չկա, միայն սատանան է, որ իշխում է...»։

Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության ապագա ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր է դառնալու «Հիշատակարանը»։ Այն Վարպետի ստեղծագործությունների ու նամակների հետ միասին պիտի լինի նրա գիտական կենսագրության և երկերի լիակատար ժողովածու ստեղծելու հիմք։ Գեղարվեստական մեծ արժեքից բացի, այն անփոխարինելի երկ է իսահակյանագիտության համար։ Լինելով ներանձնական, խոհական, դարձյալ մնում է խոշոր փաստաթուղթ բանաստեղծի ժամանակի մասին, որովհետև ամեն մի ճշմարիտ ստեղծագործություն իր ժամանակի ճշգրիտ արձագանքն է։

«Հիշատակարանի» առաջին գրառումից անցել է 85 տարի։ Հայ գեղարվեստական խոսքը այս ընթացքում ստեղծել է անվիճելի արժեքներ։ Այսօր մեր դասական ու ժամանակակից գրականությանն է միանալու «Հիշատակարանը»։ Թվում է, թե ամեն ինչ իր տեղում է, ամեն ինչ արդեն ստեղծվել է ժամանակին մեծերի կողմից։ Սակայն երբ ծանոթանում ես այս գրքին, տեսնում ես, որ սրա տեղը իսկապես բաց էր մնացել և առանց նրա մեր գեղարվեստական գրականության պատմությունը թերի կլիներ։

*Կարո՞ղ է «Հիշատակարանը» նոր փառք բերել Իսահակյանին։ Անպայման։ Որովհետև այն շաղբայլեն օրագիր չէ, այլ մեծ բանաստեղծի մեծ մտքի մատյան է, փիլիսոփայական-խոհական-բանաստեղծական մի կոթող, ուր բնակվում է նրա անմահ ոգին։*

## «ДНЕВНИКИ» АВЕТИКА ИСААКЯНА

А. А. ИНДЖИКЯН

**(Резюме)**

«Дневники» составляют значительную часть неопубликованного наследия Аветика Исаакяна. В течение 65 лет поэт делал бессистемные записи в блокнотах и тетрадях, часто на отдельных листках. Эти записи, частично опубликованные, были собраны и изданы под названием «Дневники» исаакяноведом Арамом Инджикяном. «Дневники»—философская, поэтическая исповедь великого поэта—являются незаменимым источником для исследователей творчества Исаакяна, выдающимся явлением в армянской мемуарной литературе.